



Մ Ի Յ Ս

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՀՈՐՏՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻՒ Զ.

ՓԵՏՐՎԱՆԻ ԶՅ.
1869.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՉԱՐՔԱՆԱՆ ՆՈՐ ՓՈՓՈԿՈՒԹՅԱՆ ԶԲԱՅ

ԱԶԳԱՅԻՆ պարբերական թերթը արդէն հրատարակեցին ազգային վարչական նոր փոփոխութիւնը, այն է Պատրիարքի հրատարակած, Տեղապահի ընտրութիւնն և քանի մի նոր ժողովայ կազմութիւնն, այս հրատարակութեանց հետ յայտնելով միանգամայն իրենց կարծիքը: Միտն եւս, թէպէտ և անազան, (ազգային վարչական կետ ընկեն հեռի լինելուն պատճառաւ) սակայն քաղցր պարտք կը համարի իւր կարծիքը հատարակութեան յայտնել, համապատասխան լինելով որ բարի խորհուրդներու կրկնութիւնը բացի օգտէն մնաս չունի ամենեւին:

Այնպէս մէջ ամեն սկզբունք, ամեն շարժում և ամեն յառաջադիմութիւն միշտ խղճողութեամբ և փորձաւոր

թիւններ սնի իւրաքանչեւ: Այս փորձութիւնները, եթէ չենք սխալիք, գեղեցիկ բովեր և կրթարաններ են, ուր խորհուրդները կը զտուին, մտքերը կը կրթուին և կամերը աւելի կը հաստատուին այն շքնարտութեանց մէջ, որոնք ազգերու յառաջդիմական բարելաւութեան կենսական տարրը կը կազմեն: Ազգական փորձութեանց գիմացող և յազթող ազգերը միշտ ոյժ և զօրութիւն կրտանան ապագայի դալքներուն եւս հաստատամտութեամբ տակալ և յազթել: Այս է ազգաց գործունէութեան գեղեցիկ հանգէսը այս է մրցման և շարժման թեան կազմուրիչ ասպարէզը, և ամեն յառաջադիմութիւն ոչոք մրցման արդարութիւն է թէ՛ ինչ մրցումներ ունեցած են արդեան

յառաջադէմ Եւրոպային և Ամերիկային, և ինչ փորձանաց բովերու մէջէն անցնելով հասած են իրենց ներկայ նախանձելի վիճակին, այս մասին երկար իտեղեւ կարեւորութիւն չըկայ, որովհետեւ նոր դարուց պատմութիւնը մի կենդանի վկայ է, որ կարող է մեզ խիստ գիւրութեամբ համոզել, եթէ ուսումնասիրենք եւ ջանանք օգուտ քաղել այլոց փորձէն: Մեր Ազգը, աւսանց Եւրոպացու և Ամերիկացու նշման տաքնասյներ կրելու և արիւններ թափելու, Օսմանեան Տէրութեան հայրական ձեռքէն ստացաւ սահմանադրական արտօնութիւններ: Հնձեց՝ ուր սերմանած չէր, և ժողովեց՝ ուր սփռած չէր: Եթէ մենք լուենք և չը խոտոտվանիք Օսմանեան Տէրութեան այս շնորհը, քարերը աղաղակ կը բառնան մեր գէմ և պատմութիւնը դատախազ կը հանդիսանայ մեզ: Սակայն, Սահմանադրական վարչութեան շրջանին մէջ ունեցած մեր ազգային վիճակը կրտսրպէ գմեզ կարմրելով խոտոտվանիք, որ մենք չըխարացինք մեղ շնորհուած արտօնութիւններէն օրինաւորապէս շահել և Փոխանակ դիմադրելու և յալթերու Սահմանադրութեան գէմ ելած խոչընդոտներուն և փորձութիւններուն, տատամանեցանք և վհատեցանք: Փոխանակ ազգային նորագէտ խնդիրները լուծելու, ինչպէս են Կաթողիկոսական, Պատրիարքական, առաջնորդական, ժամական, ելեւմտական, հիւանդանոցական, գաւառական, դպրոցական և այլն, ջանացինք Սահմանադրութիւնը լուծել: Այս խոտոտվանութիւնը ծանր է, բայց ուղի է, և թերութիւնը խոտոտվանից աւելի շահաւէտ է քան ծածկելը: Թողունք Սահմանադրութեան գէմ եղած անարդ մտտուութիւնները և քաջիտակուն վատահամ

բաւութիւնները, եթէ անաչառապէս նկատենք, կը տեսնենք որ վերագրեալ խնդիրները մէկ մէկ կազդուրիչ փորձութիւններ էին, որոց մէջ, եթէ փափաքէինք կրթել գմեզ օրինաւոր ժողովական նկատելով, կարծեմ թէ այժմ խիստ ամուր զօրութիւն պիտի ունենայինք ուրիշ կարեւոր խնդիրներով զբաղելու: Սակայն Սահմանադրական վերաքննութեան անժամանակ խնդիրը ճնելու վայրկեանէն և կեդրոնական համագումար ժողով (որ Սահմանադրութեան օգին է) համրութեան օրէն ՚ի վեր, գոռցես համրացաւ ամենայն բան, ինչ որ օգտակար էր և յառաջադիմական: Այս երօ կար ժամանակի անդառնալի կորուստը արդէն ողջացին ազգային պարբերականները, ինչպէս ողջացինք և մենք նախընթաց թուով. ուստի թողավ այս խօսինք ազգային Վարչական նոր փոփոխութեան վրայ:

Նոր փոփոխութիւն կ'անուանենք Ղեր. Արիտակէս արքեպիսկոպոսի պատրիարքական տեղապահութիւնը, որոց բազմամանօթ արդարասէր վարքը խիստ մեծ գրաւական է ազգային վիճակի բարելաւութեան համար: Նոր փոփոխութիւն կ'անուանենք քառնի մի ժողովական անդամաց ընտրութիւնը, որոնք ազգային դործառնութեանց մէջ ցարգ մեծ համակրութիւն գրաւած են: Նոր փոփոխութիւն կ'անուանենք մանաւանդ այն փութաջանութիւնը, որ սկսած է տրծարծիլ կեդրոնական համագումար ժողով վերակազմութեան, սահմանադրութեան վաղվազակի քննադատութեան և գործադրութեան համար: Ինչպէս որ այս վերջին կէտի յապաղու մէն շատ ազգաւեր իրողութիւններ տեղի ունեցան, քաջայոյս ենք որ աճապարու մէն եւս խիստ ազգաշահ ձեռնարկու

Թիւններ կարող են յառաջ գալ և շատ կիճռոտ խնդիրներ քիչ ժամանակի մէջ լուծել: Քաջայայտ ենք որ մեր համազգի Մեծ . Լրեօսփոխանները, կարեկցելով ազգի դառնազէտ վեճակի վերայ, կ'աճապարեն օր առաջ գործել ինչ որ արժան է և կաշուհի, ժողովատեղին արտաքայ թողելով իրենց անձնական կրքերը և կորրուտաբեր հակառակասիրութիւնները, որով շատ անգամ ժողովարան արաւայրջ անձնահաճութիւն և թշնամանալիք միջման ասպարեղի կը փոխի, անձնասիրութիւնները կը ղայրանան, խընդիրները կերպարանափոխելով անվճիռ կը մնան և ազգի վեճակը օր առօր կը վաթթարի և անդարմանելի կը լինի:

Քաջայայտ ենք, որ ներկայ վարչական փոփոխութեան և գործունէութեան մէջ չըպիտի տեղի ունենան եկեղեցականի և աշխարհականի անուամբ յուզուած վայրասպար վեճերը. վասն զի երկուքն եւս հաւասարապէս պարտք ունին կատարելու և պատասխանատու են ապադոյ սերունդին առջև: Լրկուքն ևս, եթէ անաչառապէս խոստովանինք, մասն ունին այն վարչական պատահարներուն և տարտա մութեան մէջ, որոնք ցարդ տեղի ունեցան: Եթէ քննենք սահմանադրական վերաքննութեան և կաթողիկոսական խնդրոց կոյս մնալու բուն աղբիւրները, երկուքի պղտորման մէջ եւս աւելի աշխարհականաց, քան թէ եկեղեցականաց մատներ կը տեսնենք: Եթէ յանցածք միայն այս ինչ կամ այն ինչ դատուն վերածենք, ճշմարտութեան և արդարութեան կը հեռանանք և հետեւապէս երկպառակութեան և ազգակործան սկզբունքներու կընդպատենք, քան թէ միաբանութեան և ազգաշինութեան: Ո՛վ է եկեղեցա-

կանը և ո՞վ է աշխարհականը, Այրկուքն եւս որդիք Մաքին, որոց վրայ անպայման պարտք կայ ազգի երջանկութեան համար աշխատիլ: Փոխանակ ասելու որ այս ինչ ազգային ազէտից պատճառն եկեղեցականք են կամ աշխարհականք, աւելի արդարացի կը լինի ասել որ երկուքն եւս պատճառ են, քանի որ միմեանց աջակցութեան փոխարէն՝ միմեանց վրայ տարապայման յոյս կը դնեն, աշխարհականք միայն եկեղեցականաց կը տան գործելու պարտաւորութիւնները և եկեղեցականք աշխարհականաց: Ի՞նչ խոսկ համոզում է մեր ազգին մէջ, որ միեւջեռ Լրկուպցի ազգերը իրենց աշխարհագէտ վեհապետներն անգամ տկար կը կարծեն ընդհանուրի համար միայնակ գործելու, մենք մեր կաթողիկոսներն, պարտիրաքներն և առաջնորդներն գուցէս ամենակարող կը խոստովանինք: Լրկուքն հովիւ մի ընտրելէն զկիսի, փոխանակ աջակցելու, կը քննանք և կը սպասենք որ ամենայն ինչ միայնակ գործէ, և երբ տկարութիւն կը տեսնենք գործառնութեան մէջ, այն ժամանակ միայն կ'արթննանք և բողոք կը բառնանք:

Իսկ միթէ մեր բողոք բողոքները օրինաւորութիւն ունին, քանի որ բողոքարկուներս մեր պարտք չենք կաւտարած, որ է ընտրել ամենայն աշալքութեամբ և գործուղիլ ամենայն արթնութեամբ: Այլ երբէք սուտի ամեն անպատեհութիւններէ զերծ մշնալու միակ պայմանն է ընտրական սկզբունքը արդարութեամբ գործարդել, ընտրելաց արժանաւորութիւնը քաջ կըռադատել և ընտրութիւնէն զկիսի անընդհատ գործակիլ ընտրելոյն:

Իրատու պատուական լրագիրք իր 11 թուոյն մէջ, պարտիրաքի ազգային

ընտրութեան օգուտը խիստ գեղեցիկ կերպով բացատրելէն զինք՝ կառավար. կէ միանգամայն, որ Բ. Վռնէն արտօնութիւն մը խնդրուի, որպէս զի կը բռնաւորները, առանց միջամտելու ազգային աշխարհական գործոց, հոգեւոր բով միայն զբաւըն և ազատ ըլլան իրենց գլխաւոր իրենք ընտրելու: Այս առաջարկութիւնը, որոյ մասին կարծիք կը հարցնէ յիշեալ պատուական թերթը, ըստ մեզ համապատասխան չէ մեր Այկեղեցւոյ սկզբունքին: Սեր եկեղեցւոյ ամենապատուական սկզբունքներէն մին, որով կը տարբերի Արեւմտեան եկեղեցիէն, է իւր հովիւները ինքնին ընտրել և պատասխանատու կայուցանել իւր առջեւ: Այս ընտրական սկզբունքն է, որով եկեղեցական և աշխարհական, հայր և որդի միմեանց հետ կը կապուին, միմեանց հետ կ'աշխատին և կը կազմեն քրիստոնէական գերդաստան: Այժմ երբեմն եկեղեցականք կը թերիանան իրենց պարտաւորութեանց մէջ, այդ թերութեան արմատը ժողովրդի անհոգութեան և անընտրողութեան մէջ է, և ոչ թէ սկզբունքի: Այժմ նոյն իսկ սահմանադրական բուէիւ ընտրութեան երեւոյթներու և ատենապետներու մէջ մեծամեծ թերութիւններ չ'են երեւիր, և որովհետեւ այս տեղ յանցանքը, եթէ ոչ ընտրական իրաւունքն անցող անընտրող ժողովրդի մէջ Այժմ կրօնաւորները պաշտ ըլլան իրենց գլխաւորը ընտրելու, հարկաւ ոչ միայն Պատրիարք, այլ կաթողիկոսն ալ ընտրուող ազատուի եւս պիտի ունենան, և ինչպէս կարելի է համաձայնեցնել այս կէտը Հայաստանոյ եկեղեցւոյ դաւերով նուիրագործութեան սկզբունքին հետ, որով կաթողիկոսական ընտրութիւնն միշտ Ազգին վերապահութեամբ է: Թողանք տեսլ, որ Սուրբատանի ազ

գայնք առանց կաթողիկոսի և առաջնորդաց միջամտութեան, ամենեւին առանձինն ազգայնորէն գործելու ալ տօնութիւն չունին: Հետեւապէս Իրաւունքի սոյն առաջարկութեանը չհարենարով հաւանութիւն տալ մեր կողմէն, խիստ գեղեցիկ կը գտնենք միայն իւր առաջին կարծիքն, որ է ամենայն զգուշութեամբ և արթնութեամբ ընտրել պատրիարքն: Ահա իրաւունքի իսկական քանի մի խօսքերը, որով արժան կը համարինք կնքել մեր գրուածքը:

« Այժմ մեր փափաքը սահմանադրապէս կառավարուիլ է՝ ապա ուրեմն սահմանադրութեան էական և հիմնաւոր սկզբունքը պէտք ենք յարգել և գործադրել, որ է ընդհանուրին ձայնը, առանց որոյ սահմանադրութիւն մը սահմանահանութիւն է և ընտրութիւն մ'անվաւեր և անգուտ: Սահմանադրական սկզբունքով մեր վերայ ընտրուողը նա և մեր ձայնիւ կ'ընտրուի, եթէ ոչ մեզ համար ընտրութեան ժողովրդի անհոգութեան և անընտրողութեան մէջ է, և ոչ թէ սկզբունքի: Այժմ նոյն իսկ սահմանադրական բուէիւ ընտրութեան երեւոյթներու և ատենապետներու մէջ մեծամեծ թերութիւններ չ'են երեւիր, և որովհետեւ այս տեղ յանցանքը, եթէ ոչ ընտրական իրաւունքն անցող անընտրող ժողովրդի մէջ Այժմ կրօնաւորները պաշտ ըլլան իրենց գլխաւորը ընտրելու, հարկաւ ոչ միայն Պատրիարք, այլ կաթողիկոսն ալ ընտրուող ազատուի եւս պիտի ունենան, և ինչպէս կարելի է համաձայնեցնել այս կէտը Հայաստանոյ եկեղեցւոյ դաւերով նուիրագործութեան սկզբունքին հետ, որով կաթողիկոսական ընտրութիւնն միշտ Ազգին վերապահութեամբ է: Թողանք տեսլ, որ Սուրբատանի ազ

վան զի իրենց աւ.ապ.ութիւնը չէ որ
պիտի ընտրուի ազգէն, հասար իրենց
ապանդը, իրենց յարողակութիւնը
և իրենց սկզբունքը :

ՕՐԱՏՈՒՑԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Մեր դժբաղդութենէն մեր ազ-
գային յաւաքողիմութեան հորիզնը
տակաւին այնքան սահմանափակ է, որ
օրացուցական ինքզիններն անգամ հը-
րանադրակաւ քննուելու չափ կարեւո-
րութիւն ունին : Այս դժուատեհ կա-
րեւորութիւնն է, որ կ'ըստիպէ զմեզ
դիտողութեան առնուլ օրացուցական
ինքզիր մի, որոյ շարժառիթը Տէր Ա-
րեւիտ քահանայի հետեւեալ գրու-
թիւններն են, այն է Պայմանագիր օրա-
ցուցական ուսման, Այնպէս Գործարքն
ի՞նչ առ Ս. Պատրիարքն սրբոյ Ա-
թոռոցոյ և Սոսոյի Գաբարիւլութեան :

Պայմանագիր—Չ օրութիւն գրոյց ոյս է, որ ես սա-
բազրեալս ըստ ինքրանոց նորընտիր Աւաքեղանոր-
Գաբարիւլքի սրբոյ քաղաքին Երուսաղէմի Ս. Տ. Ե-
սայեայ սրբազան Աբր Եպիսկոպոսի խոստանամ ան-
թիբի ուսուցանել Մահտի Պարոն Զարութիւն ա-
լիկերոն նորին զեղծագոյ ուսման ի յորինել զառ-
րեկան օրացոյցն ազգային միայն ի սուրբ քաղաքին
Երուսաղէմի, և այս աշխատութիւնն հինգ հազար
զահեկանի սակարկութեամբ, և զքառ ունիմ ան-
պակաս ուսուցանել, են պարբիկ :

Մուտք արեգական յերկրասան կենդանակեր-
պրա՞ ժամաւ և բողեիւ :

Գտանել զժամանակ ծննդեան և լրման լուսնի,
և առաջին և վերջին քառ. օրացոյց :

Գտանել զտեղիս արեգական և լուսնի, թէ
յար կենդանակերպի և յորում աստիճանի կցէ :

Ճանաչել զժեռաւորութիւն արեգական և լուս-
նի ի միեմանոյ և ի կցէ ժամանակի :

Գտանել զժամանակ խաւարման լուսնի և արե-
գական և որքանութիւն մասանց նորին :

Գուշակութիւնը օգոյց յերկրասան ամիս տար-
ւոյն :

Գտանել զտարեմուտ և զամսանուտ Ազարիա,
յի փոքր թուականին Հայոց :

Գտանել զտարեմուտ և զամսանուտ ժամկոց
և հրկից :

Կարծարկան և անշարժ օտիք և առեւթք Երևանց
և Լաստիսեանց :

Գտանել զուտերո կրօնական օտիք ժամկոց և
հրկից :

Գտանել զտարեմուտ և զամսանուտ հրկից :
Տէրեկանալ կանոնաց և հաշուոց տաճարակոց

գիտութեանց իւրաքանչիւր Ազգաց :

Գիտել զժամ ծագման արեգական, և զլետ մի-
ջըրեի և զարշաղոյ իւրաքանչիւր առուր :

Գտանել զըջլման հինգ հարիւրէ կին, և զքա-
նորդս նորին ի միջոցի 532 ամաց :

Տէրեկանալ չըջլմանց արեգական և լուսնի, և
զըջն ամենայն, որք կարեւորք են ի յօրինել զառ-
րեկան օրացոյցն համազգային :

Եւ զայս վերոգրեալ զամենայն ուսման ժամ
անթիբի և անաղտուս ուսուցանելոյ տամ զայս գիր
ի ժամանակի կարեւորութեան վկայել :

1865 Տէր Երեմիա Գաբարիւլ սուրբ
Մարտի 17 Սոսոյիմաս Լիւնդոն
Խափաշէլ :

Այնպէս հոգեւորականներն—Հրեշտակեան վարդապետաց
լուսնեանք արժանանցեալ ծայրագոյն շնորհաց հաղ-
ւոյն Աստուծոյ Տ. և Տ. Եսայեայ Արհիպատեմ Եպիս-
կոպոսի և արժանաժառանգ Պատրիարքի աստուածա-
յին Աթոռոցն սրբոյ Երուսաղէմի երկնայալ քաղա-
պարտին սրբութեան ամենայն խոնարհութեամբ համ-
բոյր մատուցանեմ :

Գտանել զհամազգայ զամենիմաստ տեսութե-
ան բարեխնամ մատանց անցն անդէ, որ գերբի-
նակ նախնութեամբ հաղապարտաց զամենայն տի-
կզերաց զգանչ լուսնեմ, որ արգարեւ վերամար-
մեալ փառք քան զուտեղազարդ կանոնս վերին-
լուսնափիւս ծուպէ զժամագայթ շնորհաց իւրոց
ընդ որքան օտիկեցոց և զու թիցն մի՞ տառու-
ծարեալ Հայր մեր հոգեւոր իրբեւ զարեգական օրա-
ժառանգեալ լամբէա առաստուկեալ արքա ի վե-
րուստ ընկալեալ զըստանորոգ ձիրս զարգեւոյց
Երոց և իմ ի գլուխտեան իմուս ի վայելել այդք
նոր նորագոյց ի հոգի և ի մարմն, և առաւել
քան զանորժանութիւնս իմ գափ ընդունելութիւն
ի բուսմէ բարբարութեան և բարտառեալ մտոց
խոտանմանի և զմիջք մարդարկութիւնս յամենայն
ժամ, ոչ միայն բանի բերանոյ ոչ օրտիւ և հոգե-
ւով, վրաստոյ պարտական զանմե կամարեցոյ ան-
նախանջարար նուիրել միաբանութեան Մրջոյ Ա-
թոռոց զըստման տունարկան գիտութեան և
ու այս վերաբերեալ զստեղաբաշխական հաշիւ
և այժմ սովին պիտակ քաղաքեմբա ինքրեմ ի վեհա-
փառութեան ձեւել, զի զայս նուեր մեր և զուշիւ-
քեայ աշխատութիւն ի մասնին արժանադրութեան
որոշակի նշանակել բարեհաճեցոյ և ուսմանը և
կեղեցականք հաճեցին զմեզ յիշատակել ի ժամ
մատուցման սուրբ պատարագի, և ինքրեւ զառու-
թիւնս յանցանաց մերաց :

Ընդ գրոյս ի նուեր միաբանութեան սրբոյ
ու խոխոք առաքելոյ քսան հաս յինն յորինեալ